

## ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

Կայսր Վիլհելմ II-ի քաղաքական հայեացքների ընդհանուր սկզբունքների վրայ մենք մատնանիչ ենք արել արդէն մեր առաջին յօդուածում, \*) դժբա են՝ Պրուսիայի միապետական ու բիւրոկրատիկ, զինուորական ու կրօնական տրագիցիաները: Սակայն սրանք չեն կազմում կայսրի կառավարութեան ընտրող յատկանիշները, որոնք ի մի գումարած՝ կրում են «նոր կուրս» անունը: Այդ սկզբունքները դարերից ի վեր կազմել են Պրուսիայի միապետների կառավարչական սիստեմը և ժառանգաբար անձեռնմխելի անցել են մէկից միւսը. այս տեսակէտից Վիլհելմ II-ը չ'ունի որևէ առաւելութիւն կամ պակասութիւն... «Նոր կուրսը» ընտրողող հիմնական պայմանը յիշեալ սկզբունքների գործադրութեան եղանակի, կիրառութեան մէթոդի մէջն է: Այս կողմից ևս ներկայ կայսրը խիստ օրիգինալ է ու նման չէ բոլորովին իր նստակեաց, նահապետական բարք ու վարքի տէր նախնիներին: Նա իր իշխանութեան հէնց առաջին օրերին ցոյց տուեց իր անկախ ու ինքնուրոյն բնաւորութիւնը: Ազատելով իրան «երկաթէ կանցյների» ամուր ճանկերից, կայսրը իր ձեռքը առաւ «պետական նաւի ղեկը»... «Ինձ վիճակուած է պահանորդ սպայի դերը պետական նաւի վրա: Կուրսը միտում է նոյնը \*\*): Եառաջ ամբողջ թափով»,—յայտարարեց հեռագրով կայսրը 1890 թ. մարտ ամսին Բիսմարկի հրաժարականի առթիւ: Լինելով անհատապէս տաք տեմպերամենտի տէր մարդ, տպաւորուն, եռանդոտ ու անհամբեր, կայսրը տենդային փութկոտութեամբ նետուեց քաղաքական փոթորակից

\*) Տե՛ս «Մուրճ» № 8, 1902 թ.:

\*\*) Իրօք «կուրս»-ը փոխուեց ու ստացաւ «նոր կուրս» անունը:



կեանքի յորձանքի մէջ ու այնուհետև այլևս չը կարողացաւ յետ կանգնել... Նա միջամտում է պետական կեանքում տեղի ունեցող ամեն մի փոքրիշատէ աչքի ընկնող երևոյթների մէջ, լինին ընդհանուր թէ մասնագիտական խնդիրներ: Նա խառնուում է քաղաքական կուսակցութիւնների թէ ներքին ղործնէութեան, թէ փոխադարձ յարաբերութիւնների մէջ. նա ձեռնամուխ է լինում սոցիալական ընթացիկ խնդիրների լուծման, հրաւիրելով, օրինակ, միջազգային համաժողով բանուորական օրէնսդրութեան համար (1890 թ.): Ո՛չ մի առիթ բաց չէ թողնում արտայայտելու ու պաշտպանելու իր սիրած և փայփայած նպատակը՝ ստեղծել զօրեղ նաւատորմիդ, յայտարարելով՝ որ «մի ժողովըրդի ոյժի մասին կարելի է դատել միայն նրա ծովային զօրութեան համեմատ»: Մեծ եռանդով նա բողոքում է նոր դեղաբուեցական ուղղութիւնների դէմ, պաշտպանելով կլասսիկական ճաշակը. նրա սուր ու հետաքրքրուող հայեացքից չէ խուսափում նոյնիսկ մայրաքաղաքի վերաշինութեան այս կամ այն գործը, ինչպէս մի որևէ շատրուանի չինութիւնը... Եւ այսպէս շարունակ նա ո՛չ մի դէպք, ո՛չ մի առիթ անտես չէ անում միջամտելու թէ կայսրութեան, թէ դաշնագիր տէրութիւնների նոյնիսկ ներքին կեանքի, և թէ, վերջապէս, մայրաքաղաքի «օրուայ չարիքը» կազմող այս կամ այն խնդիրների մէջ. իսկ միջամտելով, նա ջանում է ամենուրեք իր անձնական ցանկութիւնները, իր անհատական հայեացքները յառաջ մղել... Կայսրը, չնորհիւ իր այսչափ զարգացած անհատականութեան, չէ տանում փոքրիշատէ զօրեղ ու ազդեցիկ անձնաւորութիւններ: «Երկաթէ կանցլերից» յետոյ Գերմանիան 12 տարուայ ընթացքում տեսել է երեք կանցլեր՝ Կապրիւի (1890—94) Հոհենլուհէ (1894—1900) և Բիւլօ, և ամենքն էլ եղել են լոկ կայսրի հլու ծառաները, հասարակ չինովնիկներ...

Թէև ըստ սահմանադրութեան (§ 17) Կայսրի բոլոր հրամանները ու կարգադրութիւնները համարւում են օրինաւոր միայն այն դէպքում, երբ կրում են կանցլերի ստորագրութիւնը, \*) բայց քանի-քանի անգամ Վիլհելմ II-ը արհամարհելով սահմանադրութիւնը՝ անտես է արել «պետութեան առաջին նախարարին», չը նայած որ վերջինիս վրայ է ծանրանում նրա գործողութիւնների բարոյական պատասխանատուութիւնը:

Առաջ բերենք մի դէպք, որ դեղեցիկ կերպով բնորոշում է կայսրի բռնած գիրքը ու լոյս սփռում նրա կառավարչական սիստեմի վրայ: Դէպքը, որ ունի նաև իր ուրիշ հետաքրքիր

\*) §-ն Max Schippel—Reichstags Handbuch, հր. 978:



կողմերը, պատահեց ամառը ու ահագին աղմուկ հանեց հասարակութեան լայն շրջաններում, նոյն իսկ պահպանողականների բանակում:

Բաւարիայի Լանդտագի ամառուայ սեսիան է. քննում է բիւջէն: Centrum-ի, որ կազմում է Լանդտագում զօրեղ մեծամասնութիւն, — ու կառավարութեան փոխադարձ յարաբերութիւնները սաստիկ լարուած են: Կառավարութիւնը նոր է հրաժարեցրել ժողովրդական լուսաւորութեան նախարար՝ Centrum-ի protégé Լանդրմաննին, չնորհիւ սրա արդէն ամեն սահման անցած մի շարք անտակոտ վարմունքների, չնորհիւ նրա բացարձակ ատելութեան ու թշնամական վերաբերմունքի դէպի բարձրագոյն կրթական հիմնարկութիւնները: Պ. Լանդրմաննի, որպէս ժողովրդական լուսաւորութեան նախարարի զիրքը վաղուց արդէն մի contradictio in adjecto էր դառել, հետեալաբար երբեիցէ, վաղ թէ ուշ, վերջ պիտի դնուէր այդչափ անբընական դրութեան — դա պարզ էր ամենառողջամիտ մարդու համար: Սակայն Centrum-ը ունի իր յատուկ լոգիկան, ինչու և նա այլ կերպ վերաբերուեց պ. Լանդրմաննի հեռացնելուն. նա ընդունեց այդ որպէս իրան ուղղած մի հարուած ու սկսեց ամբողջ մի արշաւանք կառավարութեան դէմ: Կազմելով Լանդտագի մեծամասնութիւնը, Centrum-ը յաջողութեամբ դիմադրում էր կառավարութեան պահանջներին: Որպէս ամենանպատակայարմար միջոց կառավարութիւնից վրէժը հանելու՝ Centrum-ը ջնջեց բիւջէից 100,000 մարկ, որ յատկացրուած էին զուտ գեղարուեստական նապատակների համար: Սա մի բացայայտ վիրաւորանք էր՝ ուղղած ոչ միայն նախարարութեան, այլ և Բաւարիայի պետի՝ ձերունի պրինց բեգենտ Լուիտպոլդի անձնաւորութեան դէմ: Բանը նրանումն է, որ Բաւարիայի մայրաքաղաքը՝ Միւնխենը, չնորհիւ իր բաղմաթիւ առաջնակարգ գեղարուեստական հիմնարկութիւններին՝ մեծ հոշակ է վայելում ոչ միայն Գերմանիայում, այլև արտասահմանում: Կառավարութիւնը իր կողմից երբէք չէ խնայել որեւէ միջոց բարձր պահելու Միւնխենի այդ նախաձեռնի գեղարուեստական համբաւը, — իսկ ժողովուրդը միշտ մեծ համակրանքով է վերաբերուել նրա ձեռնարկներին: Բացի այդ, Բաւարիայի գահակալների ամբողջ տոհմը՝ Վիտտելսբախի տունը, միշտ հոշակուած է եղել որպէս գեղարուեստի սիրահար ու հովանաւորող. բաւական է յիշել միայն Լուդովիկոս II-ին, որի գեղարուեստով յափշտակուելը հասցրեց նրան նախ հողեկան հիւանդութեան, ապա և ողբերգական վախճանի (1886 թ.)... Ներկայ գահակալը ևս հանդիսանում է գեղարուեստի ջերմ պաշտպան: Այս նկատումներն են, որ զրդել են Centrum-ին



ջնջել 100,000 մարկը հէնց ղեղարուեստական նպատակներին նուիրած գումարներէից, և ոչ թէ մի ուրիշ յօդուածից. նոյն նկատումներն են, որ տուին ամբողջ միջնագէպին լուրջ քաղաքական նշանակութիւն ու առաջ բերին ամբողջ Բաւարիայի հասակութեան մէջ մեծ խլրտում:

Ինչպէս ընթերցողը տեսնում է, այս ամբողջ գէպքը, բուն բաւարական ներքին կեանքին վերաբերեալ մի երևոյթ է և ոչ մի կերպ չէ չօչափում կայսրութեան շահերը: Բայց այսպէս չը նայեց հարցի վրայ կայսր Վիլհելմ II-ը: Առանց խորհրդակցելու կամ նոյնիսկ յայտնելու ի գիտութիւն կանցլեր կոմս Բիւլօ-ին, կայսրը ուղղում է պրինց րեզենսին հետեւեալ հեռագիրը (օգոստոսի 10-ին Ն. ա.).

«Նոր վերադառնալով ճանապարհորդութիւնից՝ ես խորին սրտմտով թեմամբ կարգացի քո գեղարուեստական նպատակներով պահանջած գումարի մերժման մասին: Շտապում եմ յայտնելու եմ դժգոհութիւնը այն սեւ ապերախտութեան առթիւ, որ արտայտուել է այդ գէպքում ինչպէս գէպի Վիտտելսբախի տոհմը, այնպէս և գէպի քո բարձր անձնաւորութիւնը, որ միշտ աջակցել է գեղարուեստի զարգացման: Թոյլ տուր խնդրում եմ առաջարկելու քեզ անհրաժեշտ գումարը, որպէսզի դու հնարաւորութիւն ունենաս իրազօրծելու քո գեղարուեստական նպատակները»:

Այս հեռագիրը՝ իր խիստ յարձակումներով՝ ուղղած կղերական կուսակցութեան հասցէին, առաջ բերեց մեծ յուզմունք ոչ միայն Centrum-ի չրջաններում, այլ նոյն իսկ նացիօնալ-լիբերալների մօտ, որոնք սովոր են սրբազօրծել կայսրի արած ամեն մի քայլը...

«Մենք—ասումէ կղերականների կենտրոնական օրգան «Germania»-ն—չենք յիշում որեւէ նմանօրինակ գէպք կայսրութեան գոյութեան ամբողջ ընթացքում: Երբէք ոչ մի գերմանական կայսր չէ միջամտել դաշնադիր տէրութիւնների ներքին քաղաքական կեանքի մէջ: Հարաւային Գերմանիայի և մանաւանդ Բաւարիայի թշնամական զգացմունքները գէպի Պրուսիան չեն կարող հանգչել, եթէ զրա վրայ աւելանայ դառնութեան զգացմունքը գէպի կայսրը»:

«Կայսրի հեռագիրը—ասումէ «Frankfurter Zeitung»-ը, պատկանում է այն իմպուլզիւ գործողութիւնների կարգին, որոնք ծագում են արդարացի զրգումներից, սակայն որոնք միայն վնասում են գործին: Ի հարկէ՝ ամբողջ Գերմանիան դատապարտելի է համարում, երբ կուլտուրայի թշնամի պատահական մի մեծամասնութիւն մերժում է գեղարուեստական նպատակ-



ներին նուիրած գումարը: Բայց հէնց կայսրը չը պէտքէ ենթարկուէր անմիջական դժգոհութեան զգացմունքին դէպի Բաւարիայի Նանդտագի մեծամասնութիւնը: Հարկ չը կար նոր գէնը տալու Centrum-ի ձեռքը, որ առանց այն էլ օգտուում է բաւարական ժողովի սեպարատ հակումներէ:

Այսպէս վերաբերուեց և պրինց-ընգենար. սա ամենայն քաղաքավարութեամբ մերժեց կայսրի աջակցութիւնը՝ յայտնելով, որ յիշեալ գումարը նա արդէն ստացել է Լանդտագի մի անդամից:

Այս մասնաւոր դէպքը պարզ արտացոլում է իր մէջ Գերմանիայի քաղաքական կարգերի ներկայ անարխիական դրութիւնը: Եւ մամուլը լուրջ ուշադրութիւն դարձրեց այս կէտի վրայ. նա, մասնաւոր շնորհիւ դէպքի անօրինականութեան և շլատակար հետեանքների վրայ, բարձրացրեց ընհանուր սահմանադրական խնդիր, այն է՝ կառավարութեան պատասխանատուութեան հարց, որ կազմում է Գերմանիայի քաղաքական կազմակերպութեան ամենախոշոր պակասութիւններից մէկը:

Այսպէս «Frankfurter Zeit.»-ը մի առաջնորդողում «Ո՞վ է պատասխանատու» վերնագրի տակ սուր քննադատութեան է ենթարկում կայսրի բռնած դիրքը ներքին քաղաքական կեանքում, կանցլերի անզօրութիւնը գահի առաջ: Սակայն, դժբախտաբար, ինքը թերթը չէ առաջարկում որեւէ արմատական միջոց՝ դուրս գալու ներկայ ծանր ու կճոտտ պայմաններից: Մի շտրք արդարացի նկատողութիւններ ու դառն խորհրդաւութիւններ—անհայն ամենը, ինչ տալիս է նոյն իսկ այդչափ լուրջ թերթը:

«Սակաւաթիւ են—ասում է նա—կառավարչական գործողութիւնները, որոնք այնչափ խոր ու յաճախ չօշափէին պետութեան քաղաքական միջոցաւորը, դաշնակից տէրութիւնների փոխադարձ յարաբերութիւնները ու կայսրութեան վարկը արտասահմանում, որչափ կայսրի անձնական ցոյցերը (Kundgebungen): Արդե՞ք երբեք փոխուելու է այս դրութիւնը...» \*)

Աւելի որոշ ու վճռողական կերպով է խօսում «Die Zukunft» լուրջ չաբաթաթերթը: «Ի հարկէ՝ մեզ համար ես հեռագիրը սոսկ մի սիմպտոմ է, սակայն այնչափ էական, որ մեզ հարկադրում է քննութեան առնել այդ ամբողջ դէպքը: Իսկ երբ մեզ ասում են, աննպատակ է այդ քննութիւնը, որովհետեւ կայսրի զօրեղ անձնաւորութիւնը դրանից չի փոխուի, մենք պատասխանում ենք, որ մենք գործ ունենք այստեղ ոչ կայսրի անձ-

\*) „Wochenblatt der Frankf. Zeit.“ № 34.



նաւորութեան հետ, այլ գերմանական կայսրութեան սահմանադրութեան հետ: Սահմանադրութիւնը չէ ճանաչում մի կայսրի, որ ինքն իր սեփական կանցլերն է, նա տալիս է կայսրին ու կանցլերին զանազան իրաւունքներ, դնում է նրանց վրայ տարբեր պարտականութիւններ: Իսկ եթէ նա այլեւ բաւարարութիւն չէ տալիս, անհրաժեշտ է վաղը և եթ նորան փոխել, միևնոյնն է՝ ձայների մեծամասնութեամբ, թէ կարող մարդկանց բռնի ոյժով հարկաւոր է փորձել, կարող է, արդեօք, մի հասուն ու զարգացած եւրոպական ժողովուրդ առաջնորդուել սոսկ մի մահկանացուի կամբով, որ ազատ է ամեն հսկողութիւնից ու կրիտիկայից, կարող է արդեօք նա յառաջադիմել առանց վտանգելու հովիւին ու նրա հօտը... \*):

Մինչդեռ այս միջնադէպը պարզում է Գերմանիայի սահմանադրական պոպուսուսը կարգերը՝ կայսեր անպատասխանատու գործնէութիւնը, նրա անհատական անկախ ու գիրիշխող դերը, մի ուրիշ դէպք բնորոշում է «նոր կուրսի» մշտական ցաւը՝ նրա տատանումները, անհետեղականութիւնը: Այդ դէպքը բռնիների տիեզերահռչակ երեք զօրապետների վիլհելմ II-ին այցելութեան խնդրին է:

Ո՛չ միայն Գերմանիան, այլև ամբողջ քաղաքակիրթ աշխարհը անշուշտ չէ մոռացել այն խրախուսական հեռագիրը, որ վիլհելմ II-ը ուղարկեց Տրանսիլաւի նախագահ ծերունի Կրիւզերին անգլո-բուլղարական պատերազմի սկզբում: Գերմանիայի չովինիստ մամուլը այդ ժամանակ մի կողմից խօսք չէր գտնում գովասանելու կայսրի այդչափ մարդասիրական ու համարձակ քայլը, միւս կողմից խրախուսուած, ամենայն սանձարձակութեամբ արտայայտում էր իր հակաանգլիական զղացմունքները: Եթէ մինչև այդ օր նա յիշատակել էր անգլիացիների միայն իրօք տեղի ունեցած պարտութիւնները՝ համեմելով լպիրշ ու բարձրահնչիւն խօսքերով, այդ օրուանից նա սկսեց հնարել նոր պարտութիւններ, երբէք անգլիացիներին կողմից չը կրած, ու նոր յաղթութիւններ, երբէք բռնիների կողմից չը տարած... Ամեն մի բռնիներին անկեղծ համակրողի սիրտը կսկծանքով էր լցւում, տեսնելով՝ ինչպէս աղատութեան վսեմ կոիւր դառել է նեղսիրտ չովինիստների ձեռքին մի քաղաքական գործիք, ազգայնական ատելութեան մի ստոր միջոց... Անցան այդ օրերից ամբողջ երեք երկար ու ձիգ տարիներ, վերջացաւ պատերազմը, բուռն հերոս ժողովուրդը չը կարողացաւ այլևս դիմադրել հօգր Ալբիոնին ու յանձն առաւ նրա լուծը... Պատերազմը քարու-

\*) Տես. «Die Zukunft» № 48.



քանից արեց հերոս ժողովրդի ամբողջ հայրենիքը. նա մնացել է անտուն, սովամահ, անձար իր անապատ դարձած մայրենի հողի վրայ... Կարող էին, արդեօք, նրա «երեք պահապան հրեշտակները», նրա կարճ ժամանակամիջոցում համայն աշխարհի համակրանքը վաստակած զօրապետները՝ Բոթան, Դրվէտը, ու Դելարէյը անտարբեր նայել իրանց քույրերի ու եղբայրների տառապանքին... Թողնելով սուր ու հրացան, նրանք աճապարեցին Անգլիա շուտափոյթ օգնութիւն հայցելու։ Լի էին յոյսերով իրանց նոր «հայրենիքի» վրայ, բայց բաւական էր մի տեսակցութիւն Չեմբերլենի հետ, որպէսզի ամեն յոյս ի դերև կնէր... Ընչ անել։ Միթէ բարոյական իրաւունք չ'ունէին դիմելու Եւրոպայի համայն հասարակութեան ու նոյնիսկ նրանց կառավարութիւններին՝ խնդրելով նիւթական աջակցութիւն։ Նրանց ականջները խլացան՝ լսելով երեք տարուց ի վեր անվերջ ներբողներ ու համակրանքի աղաղակներ։ Նոյն իսկ Վիլհելմ II-ը բացարձակ յայտնել է նրանց իր բուռն համակրանքը։ Արդ, հետու ամեն տարակուսանք։ Եւ անհա երեք ղեկերալները ճանապարհ ընկան զէպի Դանիա, Բելգիա, Ֆրանսիա, Գերմանիա... Աննախանձեյի վիճակ... Երեկ՝ հերոս մարտնչողներ, այսօր՝ ականաջ դիպտմատներ. երեկ՝ կուռղ, այսօր՝ մուրացող... Les extrémités se touchent—ասում է ֆրանսիական փորձառութիւնը։

Ուղղելով նախօրօք մի ազդու կոչ Եւրոպայի հասարակութեան Հաագայից, «երեք մուրացկանները» ճանապարհ ընկան... Անցան Դանիայից Բելգիա, այստեղից Ֆրանսիա։ Պատրաստում են անցնելու Գերմանիա, բայց ինչ որ չարագուշակ լուրեր են հասնում. ինչ է պատահել։

Գեներալները դեռ Հաագայում եղած ժամանակ կիսապաշտօնական հրաւեր են ստանում խնդրել Բերլինի անգլիական հիւպատոսի միջոցով տեսակցութիւն կայար Վիլհելմ II-ի հետ։ Գեներալները ուրախութեամբ ընդունում են առաջարկը ու նոյն իսկ յայտարարում, որ նրանք բոլորովին հետու են որևէ հակամարտական ագիտացիա անելու դիտաւորութիւնից։ Այս տեղի է ունենում սեպտեմբերի 18-ին (1902 թ. ն. տ.) և այն էլ—այս է ընտրոշը—առանց Գերմանիայի արտաքին գործերի նախարարութեան գիտութեան...։

Անցնում են տաս օր։ Ի՞նչ է կատարւում այդ ժամանակամիջոցում բարձրագոյն քաղական չըջաններում—մնում է անյայտ. այսքանն է սոսկ պարզւում պաշտօնական մամուլ հաղորդագրութիւնից, որ ընէրների զեներալների ընդունելութիւնը կայսրի կողմից այլ եւս տեղի չի ունենալ... Հէնց նոյն ժամանակ յայտնւում է, որ կայսրը պատրաստւում է այցելելու



նոյեմբերի սկզբներում Սնգլիան... Այսքանն էլ բաւական էր ըմբռնելու, որ բարձրագոյն շրջանների տրամադրութիւնը հիմնովին փոխուել է, որ քամին բոլորովին հակառակ կողմից է սկսել փչել... Ի՞նչ սասել կ'ուզի, որ անմիջապէս փոխուեց և մառուի որոշ մասի լեզուն...

Չը նայած այս անբարեյաջող պայմաններին, երեք «հերոս-մուրացկանները» անցան Ֆրանսիայից Գերմանիա... Խիստ հետաքրքիր ու խրատական պատկեր էր ներկայացնում Բերլինը ամբողջ երեք օրուայ ընթացքում՝ նրանց գալու առաջին րոպէից մինչև հրաժեշտի վերջին մոմենտը։ Մայրաքաղաքի ամբողջ հասարակութիւնը բաժանուած էր երկու հակառակ մասի. մինչդեռ ժողովրդի ստորին ու միջին խաւերը սիրտ չարժող անկեղծ ու խոր ոգևորութեամբ արտայայտուած էին հերոս ժողովրդի առաջնորդներին իրանց բոլոր յարգանքը, հասարակութեան բարձր դասակարգերը պահպանուած էին առոն անտարբերութիւն, իսկ կառավարութիւնը մի շարք մանր ոստիկանական կարգադրութիւններով նոյն իսկ արտայայտեց իր թշնամական վերաբերմունքը... Այսպէս պաշտօնական մամուլը յայտարարեց. «Կառավարչական շրջանները (իմա կանցլեր կոմս Բիւլօ, նախարարները և այլ բարձր պաշտօնեաները) ի նկատի չեն առնելու գններալների ներկայութիւնը մայրաքաղաքում»։ «Գններալներին ընդունող յանձնաժողովից խնդրուած է կարգադրել այնպէս, որ նրանք կայարանից դէպի իրանց բնակարանը ուղղորդուելիս չ'անցնեն Unter den Linden փողոցով»։ «Կայսրը ցանկութիւն է յայտնել, որ պաշտօնական անձինք ու զինուորականները չը մասնակցեն գններալների ընդունելութեան և ի պատիւ նրանց կայանալիք հրապարակական ժողովին»... բայց կանգ առնենք այստեղ, հերիք է և այսքանը։

Այս մանրակրկիտ անօրինութիւնների մէջ ամենից ընդունելի պարզ կերպով է արտայայտուած պրոուսականութեան ամբողջ էութիւնն ու ոգին... իսկ բոէրների այցելութեան ամբողջ դէպքը մի նոր անդրդուելի ապացոյց է Գերմանիայի ետական, նեղ ու չահաւէր քաղաքականութեան։ Պարզ է, որ բոէրների համար էլ այսօր «պոմբանցի զրենադերի ոսկորների» գինը նոյնչափ բարձր է, որչափ էր 1871 թ. բոլզարների համար...

Միթէ՞ արդարացի չեն պրոֆ. Պաուլսենի էպիգրաֆում դրած խօսքերը։ Ո՞վ կը համարձակուի առարկել, թէ Բիսմարկը չէ, այլ Գեթթեն է այսօր իշխում Գերմանիայի քաղաքական-օրհալական կեանքում... Միայն կարճամիտ մարդիկ կարող են խաբուել կայսրի՝ րոպէական յափշտակութիւնից թելադրուած՝



ազատամիտ ճառերով ու հեռագիրներով, դրանք չափազանց կարճատև են, որպէսզի լինեն ազդեցիկ. դրանք լոկ չլացնող ֆէյերվերկներ են, որ պայթելով անյայտանում են՝ չը թողնելով ոչ մի հետք: Արդ, միթէ ընդունակ են նրանք յետ մղելու Բիսմարկի զօրեղ ոգին, որ բուն է դրել կայսերական պալատում ու խոր թափանցել Գերմանիայի ամբողջ հասարակական կեանքը... ճիշտ է, Գերմանիայի անտեսական, սոցիալական ու կուլտուրական զարգացումը արդէն երևան է բերել րէակցիայի պարզ սիմպտոմներ, սակայն դրանց գործը ապագայումն է. ներկան պատկանում է անբաժան ու անպայման Բիսմարկին: Կամենում էք նոր ապացոյցներ, նոր փաստեր, ահա, երկար փնտրելու կարիք ու հարկ չը կայ, դարձե՛ք ձեր հայեացքը դէպի Ռայխստագը և դուք կը տեսնէք, որ այնտեղ ազատ ու համարձակ սաւառնում է Բիսմարկի ոգին... «Գերմանական ժողովրդի ներկայացուցիչները»(sic!) արհամարհելով ժողովի արդար պահանջները, հասարակական կարծիքը, մոռանալով իրանց դիրքն ու նոյնիսկ իրանց մարդկային արժանաւորութիւնը, կործանում են ամեն իրաւունք ու սպառնում նոյն իսկ պետական սահմանադրութեան գոյութեան... Ռայխստագում այսօր պահանջում են եզուիտների վերադարձը՝ \*) այնտեղ արտօնեալ մեծամասնութիւնը ամեն միջոց գործ է դնում ապահովելու իր առանց այն էլ ապահով տնտեսական վիճակը, պահանջելով դեռ ևս ոչ մի եւրոպական պետութեան մէջ չը տեսնուած ու չը լսուած բարձր մաքսեր... Նրան ի՞նչ փոյթ, որ այսօր Գերմանացի աշխատաւոր ժողովուրդը սովորական տաւարի մսի փոխարէն ըստիպուած է ուտել ոչ միայն ձիու, այլ և շան միս \*):...

\*) 1872 թ. առանձին օրէնքով եղութները արտաքսուեցին Գերմանիայի սահմաններից: Այդ օրից սկսած Centrum-ը չէ դադարում պահանջել կոռավարութիւնից եղութների վերադարձը:

\*\*) Կառավարութիւնը ներկայումս ամենակարող կալուածատէրերի—ազրարների—ճնշման տակ փակել է Գերմանիայի սահմանները ու խիստ ոահմանափակել տաւարի ներմուծումը հարևան երկրներից, մինչդեռ ներքին շուկան բաւարարութիւն չէ տալիս: Այս արհեստական քաղաքականութեան բնական հետևանքն է լինում մսի սարսափելի թանկութիւնը. սկսւում է «մսի սով» (Fleischnot)... Ցաւարի ու խոզի մսի գները բարձրացել են 15%-ից մինչև 65% համեմատաբար նախկին տարիների գների հետ... ժողովրդի չքաւոր մասը ստիպուած է բաւականաճալ ձիու և նոյն իսկ շան մսով... Այսպէս, օրինակ, Գրինբերգում (Միլբիլա) հոկտեմբեր ամսին մորթել են փոխանակ սովորական 30—40-ի՝ 112 շուն... Մի ուրիշ տեղ (Լանդենբլաու) նոյն հոկտեմբեր ամսին ձի մորթել են 120%-ով ակն, քան նախկին օգոստոս ամսին... (տես „Vorwärts“ № 267): „Frankf. Zeit.“-ը խօսելով մսի սովի մասին՝ հետևեալ յուսահատական տողերով է վերջացնում. «Կառավարութիւնից ոչինչ չէ կարելի սպասել, ոչինչ



Բայց թողնենք այժմ այս. մենք առիթ կ'ունենանք աւելի յարմար ժամանակ վերադառնալու թէ այդ խնդրին և թէ Ռայխստագում կուսակցութիւնների մղած տաք պայքարի պատճառներին:

Գերմանիայի ներքին քաղաքականութիւնը լրիւ ըմբռնելու համար անհրաժեշտ էր նախօրօք մի հայեացք ձգել լեհ-գերմանական յարաբերութիւնների վրայ, որ մենք փորձեցինք կատարել անցեալ համարում. այդտեղ աւելի՛ քան որեւէ ուրիշ խնդրում՝ պարզ արտացոլում են Բիսմարկի ու առհասարակ պրուսականութեան բիւրոկրատիկ-շովինիստական տրադիցիաները...

QUIDAM

---

չէ կարելի յուսալ. ժողովուրդը այժմ հնձում է այն, ինչ որ ցանկ է ընտրութիւնների ժամանակ: Միմիայն ընտրողների կազմի հիմնական փոփոխութիւնը կարող է մեզ օգնել... (Wochenblatt der Frankf. Zeit. № 38):